

Ատաճաբուծական խնամք մանուկների համար

Առողջ բերանը սկսում է վաղ տարիքից: Նույնիսկ նախքան ձեր մանուկն ատաճներ ունենա, կարևոր է սկսել նրա համար բերանի խնամքի ռեժիմ մշակել: Երբ ատաճները սկսեն ծկթել մոտ 6 ամսականում, դուք պետք է ավելացնեք դա ձեր ռեժիմին: Կաթնատաճների քայքայումը կարող է տևական խնդիրներ առաջացնել:

Ինչու է կարևոր մանկան բերանի խոռոչի խնամքը

Մնունդն ու ըմպելիքները խառնվում են մանրէների հետ՝ ատաճների վրա առաջացնելով կպչուն նյութ, որը կոչվում է ատաճափառ: Ատաճափառի մեջ գտնվող մանրէները թթու են արտադրում, որը քայքայում է ատամի կարծր թաղանթը (էմալը): Սա կոչվում է ատամի քայքայում: Բերանի խոռոչի լավ խնամքը կանխում է ատաճափառի կուտակումն ատաճների վրա և ատաճների քայքայումը:

Ինչո՞ւ է կարևոր պահպանել կաթնատաճների առողջությունը:

- Մանկան ատաճները պահպանում են չափահաս ատաճների համար նախատեսված տարածությունը: Եթե կաթնատամը քայքայվի կամ շատ շուտ հեռացվի, ապա չափահաս ատամի համար նախատեսված տարածությունը կարող է փակվել: Ձեր երեխային կարող է օրթոդոնտիկ բուժում պահանջվել ապագայում:
- Վնասված կաթնատամը կարող է բերել նրան, որ դրա տակ եղած չափահաս ատամը վատ զարգանա: Սա կարող է առաջացնել բծեր, փոսիկներ և թույլ չափահաս ատաճներ:
- Կաթնատաճները կարևոր են խոսքի զարգացման համար: Դրանք նաև կարևոր են, որպեսզի օգնեն ձեր երեխային ճիշտ ծամել սնունդը և լավ սնվել:

Ատաճների քայքայման կանխում



Ծննդից մինչև 6 ամսական.

- Մաքրեք ձեր մանկան բերանը և լնդերը նրան կերակրելուց հետո և քնելուց առաջ: Օգտագործեք ջուր և բարակ կտոր կամ մարյա, կամ մանկական փափուկ ատամի խոզանակ:
- Խոսեք ձեր երեխայի առողջապահական խնամքի մատակարարի հետ ֆտորի մասին: Ֆտորն օգնում է կանխել խոռոչների առաջացումը: Շատ քաղաքներում ջրամատակարարմանը ֆտոր է ավելացվում: Եթե ձեր տարածքում դա չի արվում, ձեր մանկանը կարող է պահանջվել ֆտորի հավելում:

6-ից մինչև 12 ամսական.

- Երեխայի առաջին ատամները ծկթում են մոտ 6 ամսականում: Ձեր մանուկին տարեք մանկական ատամաբույժի մոտ մինչև նրա առաջին տարեդարձը:
- Ամեն կերակրելուց հետո և քնելուց առաջ ատամները մաքրեք փոքր, փափուկ խոզանակով և ֆտոր պարունակող ատամի մածուկով: Ատամի մածուկի քանակը պետք է լինի բրնձի հատիկի չափից ոչ ավել:
- Հարցրեք ձեր ատամաբույժին ֆտոր պարունակող լաքի մասին, որը կարելի է ատամներին քսել յուրաքանչյուր 3-ից 6 ամիսը մեկ:
- Ամեն օր ատամաթելով մաքրեք ձեր երեխայի ատամները: Սա հեռացնում է մանրէները և ատամնափառն ատամների միջև և լնդերի տակից:
- Մի քնացրեք ձեր մանուկին կաթի, կաթնախառնուրդի կամ հյութի շշով: Սա կարող է ատամների քայքայում առաջացնել:
- Ձեր երեխային շշից բաժակի փոխեք մինչև նրա առաջին տարեդարձը:

Երբ զանգահարել ատամաբույժի

Զանգահարեք ձեր երեխայի ատամաբույժին, եթե՝

- Կաթնատամները ծուռ են կամ չեն ծկթում
- Դուք նկատում եք շագանակագույն կամ սև բծեր ձեր մանկան ատամների վրա
- Ատամն ընկել է

Health Net of California, Inc.-ը հանդիսանում է Health Net, LLC-ի և Centene Corporation-ի մասնաճյուղ: Health Net-ը Health Net, LLC-ի գրանցված ապրանքանիշն է: Բոլոր այլ նշված ապրանքանիշերը/ծառայության նշանները պատկանում են իրենց համապատասխան կազմակերպություններին: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

© 2000-2025 The StayWell Company, LLC. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս տեղեկությունը նախատեսված չէ մասնագիտական բժշկական խնամքը փոխարինելու համար: Միշտ հետևեք ձեր առողջապահական խնամքի մասնագետ ցուցումներին: